



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

22/11/2019

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էր՝ Արտաշ Այվազյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին

22.11.2019թ. -ի թիվ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 22.11.2019 թ.-ի թիվ 11 հերթական նիստի օրակարգը՝

1) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 31.10.2019թ. -ի թիվ 88-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Օ.0018 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3) ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 31.10.2019թ.-ի ԹԻՎ 88-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին „Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և „Բյուջետային համակարգի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և „Նորմատիվ իրավական ակտերի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով.

1. Տալ համաձայնություն համայնքային բյուջեում կատարել պլանային փոփոխություն հողի իրացումից առաջացած 1660300 ՀՀ դրամ գումարը ներառել համայնքային բյուջե՝ որպես հողի իրացումից մուտքեր (տող 8411) և նպատակաուղղել

- 1290300 ՀՀ դրամ բաժին 1 խումբ 6 դաս 1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտին՝ այդ թվում
- 148000 ՀՀ դրամ վարչական սարքավորումներ հոդվածին /հոդված 5122/ Եղեգնաձորի ՄՍԿ ՀՈԱԿ-ի կարիքների համար ընդհանուր օգտագործման կիսափափուկ աթոռներ ձեռք բերելու համար
- 65000 ՀՀ դրամ՝ շենքերի և շինությունների նորոգում հոդվածին /հոդված 5113/ Միկոյան 13 բնակելի շենքի բակի ցայտաղբյուրի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար
- 1077300 ՀՀ դրամ Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի համար եվրոպատուհանների և եվրադռների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների ֆինանսավորման համար:
 - 95000 ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ոլորտի այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածին /հոդված 5129/ էլեկտրական ջեռուցիչներ ձեռք բերելու համար:
 - 275000 ՀՀ դրամ բաժին 5 խումբ 1 դաս 1 աղբահանություն ոլորտի այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածին /հոդված 5129/ աղբամանների ձեռքբերման ֆինանսավորման համար:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 31.10.2019թ.-ի <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 88-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ն/

